

թողնել, որ նստայու այրին հաղթատեցի մի ռամկի տըն-
փեսայ բերի:

Թ. Սերունդը իւր ներքին գործերը վարում է սերըն-
դական ժողովներում, ուր հաւաքւում են գլխաւորապէս ծե-
րունիներ և ուր երբեմն մուտք են գործում և՛ պառաւներ:
Այսպէս՝ օրինակ, երբ միմեանց հետ կուում են, երբ մէկին
մի դժբաղդովելն է պատահում, երբ հղբայրները կամենում
են միմեանցից բաժանուել, երբ տմբող սերնդին պատկանող
ընկույնները կամ ուրիշ պտղատու ծառերը պէտք է թափ
տալ ու բաժանել իրենց մէջ՝ տղամարդիկ և մանաւանդ ծե-
րունիները հաւաքւում են և խորհրդակցութեամբ որոշումներ
անում:

Ժ. Տոմային ընդհանուր ժողովներ հազիւ են պատա-
հում, ամբողջ տոհմին վերաբերեալ խնդիրները լուծելու հա-
մար սովորաբար իւրաքանչիւր սերնդից որոշեալ թուով մար-
դիկ են ընտրւում, որոնք և ժողովներ անելով խորհրդակցում
են միմեանց հետ, աշխատելով իւրաքանչիւրը պաշտպանել իւր
սերնդի շահերը:

Այսպէս Ջահլերդեան տոհմը կամենալով մի եկեղեցի ու-
նենալ, իւրաքանչիւր սերնդից ընտրել է երկու հոգի, որոնք
պիտի հոգանայր մասին: Երբ սրանից 25 տարի առաջ կա-
մենում էին ջուր բերել գիւղում, իւրաքանչիւր սերունդը ըն-
տրել է երեք հոգի, որոնք և գլուխ են բերել տոհմի ցանկութիւնը:

ՆԱՀԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՆՈՒ

Նահապետական գերդաստանը, որ ծագել է սերնդից,
հրը նրա մէջ զարգացել է անհատական ուղղակիանութեան
գաղափարը, նկատելի է Լօսու ոչ լի է մի քանի, ինչպէս սե-
րընդինն էր, այլ բոլոր գիւղերում: Սակայն նահապետական
մեծ գերդաստանը արդէն այստեղ անհետացել է, մնացել է
միայն միջինը. 60—70 անդամից բաղկացած գերդաստան
այլ ևս չը կայ, կայ միայն 25—30 անդամներից բաղկա-
ցած, ինչպէս օրինակ Օձունում Վարդանանց գերդաստանը:

Այս նահապետական գերդաստանը հիմնուած է գլխաւորապէս ա. հայրական իշխանութեան, ք. աւագութեան իրաւունքի և գ. ազնատական *) (agnatique) կարգի վրայ:

Հայրական իշխանութիւնը այս գերդաստանի մէջ գրեթէ ծայրայեղ է, որովհետեւ նա տարածուած է որդիների, թոռների ու սրանց կանանց ոչ միայն անձի, այլ և ստացուածքի վրայ: Նա է որոշում իւրաքանչիւրի աշխատանքը, ամուսնացնում որդիներին ու թոռներին գրեթէ ինքնակամ, պատժում և նոյն իսկ հեռացնում տանից այն տղին կամ հարսին, որ համարձակուած է ընդդէմ գնալ իւր իշխանութեան: Բացի սրանից՝ նա կատարելապէս տէր է գերդաստանի ունեցած բոլոր ստացուածքին: Բոլոր անդամների, տղաների, հարսների վաստակը՝ նրան է յանձնուած, և առանց նրա համաձայնութեան ոչինչ չի ծախսուած: Միայն հարսների ամուսնութեան ժամանակ ստացած ընծաները, նրանց բերած օժիտը, մնում են որպէս հարսների անձնական սեպականութիւն, և գերդաստանի հայրը ամենածայրայեղ դէպքում միայն վերցնում է նրանցից:

Բայց այս իրաւունքների հետ գերդաստանի հայրը ծանր պարտականութիւններ ևս ունի: Նա պատասխանատու է գերդաստանի ամէն մի անդամի արարքի համար, նա պարտաւոր է իւր միջոցների համեմատ հոգալ ամէն մի անդամի կարիքը, այսպէս օրինակ, եթէ գերդաստանի անդամներից մինը, նոյն իսկ տանից հեռանալով, ի հարկէ չը բաժանուելով գերդաստանից, իւր անխոհեմութեամբ, մինչև անդամ գերդաստանի հօր կամքի հակառակ գնալով, մեծամեծ պարտքերի տակ ընկնի, վերջինս պարտաւոր է նրա այդ պարտքերը

*) Ազնատական, այսինքն քաղաքական կարգի, ազգական կոչուած է այն անհատը, որ հպատակուած է նահապետին իրրեւ իւր քաղաքական գլխաւորին, առանց նայելու այն հանգամանքին, որ գուցէ ինքը նրա անմիջական սերունդը չէ: Իսկ այն դէպքում, եթէ մինը մի նահապետի սերունդ, բնական ազգական լինելով հանդերձ, գուրս է գալիս նրա իշխանութիւնից՝ այնպիսին կոչուած է կոզնատական (cognatique), այսինքն բնական կարգի ազգական:

հատուցանել, նաև մի որևէ դժբաղդութեան պատճառով, եթէ մինը անընդունակ է դառնում աշխատելու և կամ մեկնում է՝ հայրը պարտաւոր է հոգալ նրա որդիներին, կնոջ մասին:

Սակայն այս բացարձակ իշխանութիւնը բաւականաչափ մեղմանում է հայրական սիրոյ և գութի զգացումով, և գերդաստանի հայրը երբէք չի ներկայանում որպէս բռնակալ:

Տարիներին ընթացքում գերդաստանի հայրը ծերանալով և զործից յետ քաշուելով, հետզհետէ կորցնում է իւր իշխանութիւնը, և որդիներն էլ արդէն շափտհաս դառնալով, այլևս նախկին խոնարհութեամբ չեն հպատակուում նրան և նա ստիպուած է լինում ծանրակշիռ խնդիրներում խորհրդակցել սրանց հետ:

Այսպէս տեսնում է մի առ ժամանակ ես, և ի վերջոյ նա իւր իշխանութիւնը ստանձնում է իւր աւագ որդուն, վերապահելով իրեն միանգամայն ընդհանուր վերահսկողութիւնը:

Աւագ եղբայրն ես թէև դարձեալ համարում է որպէս ամբողջ գերդաստանի ներկայացուցիչ, նրա շտհերը շինական ժողովներում, դատարանում պաշտպանող, ամբողջ գոյքի սեպահականատէր և գանձապահ, սակայն և այնպէս՝ նրա իշխանութիւնը բաւականաչափ սահմանափակուած է, նա պարտաւոր է փոքրի շատէ լուրջ խնդիրներում խորհրդակցել իւր եղբայրների հետ, հաշիւ տալ գերդաստանի ել և մուտքի մասին:

Գերդաստանի ներքին կառավարութիւնը գտնուում է տատի կամ մօր ձեռքին, նա է հսկում հարսների և աղջիկների վրայ, առանց որի թոյլտուութեան ոչ մի տեղ չեն կարող գնալ, նա է պահում տան բոլոր բարիքը և առանց նրա թոյլտուութեան ոչ ոք իրաւունք չունի մի բան վերցնելու, մանաւանդ որ բոլոր բանալիները նրա մօտ են պահուած, նա է շատ անգամ միջնորդ հանդիսանում հարսների և սրանց ամուսինների, որդիների և սրանց հօր՝ գերդաստանի գլխի մէջ:

Գերդաստանի հայրը տիրում է իւր իշխանութիւնով, հեղինակութեամբ, իսկ մայրը իւր սիրով ու գլխով: Հօրից վախենում են, մօրը սիրում, և երբ աէրը չի ազդում,

մայրը դիմում է վախի՝ սպառնալով գանդատուել գերդաստանի հօրը:

Սովորաբար գերդաստանի մայրը մարմնացեալ աշխատութիւն և գաստիարակութիւն է ներկայացնում, Առաւօտուանից մինչև գիշեր շարունակ աշխատելով նա բարի օրինակ է տալիս հարսներին ու աղջիկներին աշխատելու, և իրաւունքով էլ պահանջում է իւր օրինակին հետեւելու. միննոյն ժամանակ հսկում է նրանց աշխատանքի վրայ շարունակ նկատողութիւններ անելով. նա է սովորեցնում նրանց կարել, ձեւել, կերակուր եփել, պանիր, իւղ պատրաստել, գորգ, կապերտ գործել և այլն:

Եւ պէտք է ասել, որ բոլոր հարսներն էլ նրան սիրում են, եթէ միայն սա անխոհեմութեամբ մէկին կամ միւսին փոքր ինչ աւելի սիրելով և նրա կողմը պահելով ամբողջ գերդաստանի խաղաղութիւնը չի խանգարում:

Գերդաստանի մօրն օգնական, և նրա սաստիկ պառաւած կամ մեռած ժամանակ փոխարինող, համարում է աւագ որդու կինը, չնայելով նոյն իսկ, որ նա հասակով կրտսեր եղբայրների կանանցից փոքր լինի:

Սակայն սրա իշխանութիւնը նոյնքան մեծ չէ, որքան սկեսրոջը, և սա ստիպուած է շատ անգամ աւելի մեղմ կերպով վարուել հարսների, տալերի հետ, ու շատ խնդիրներում դիմել գերդաստանի հօր՝ իւր սկեսրայրի կամ ամուսնու գերիշխանութեան:

Սակայն պէտք է ասել, որ դարևոր սովորութիւնն այնպէս կարգաւորել և բաժանել է իւրաքանչիւր հարսի իրաւունքն ու պարտականութիւնը, նրա աշխատանքի բաժինը, որ թէ սկեսուրը և թէ, մանաւանդ, մեծ հարսը ոչ թէ հրամայողի, աշխատանք բաժանողի, այլ միմիայն նկերահսկողի դեր են կատարում: *)

*) Այսպէս, օրինակ, վաղեմի սովորութեամբ.

Սկեսուրը հաց է թխում, կերակուր եփում և բաժանում, հախարակ մանում:

Առաջին, աւագ հարսը խմոր է հունցում, հախարակ մանում,

Անազուլիանի կարգը կայանում է նրանում, որ նախ գերիշխանութիւնն անցնում է գերդաստանի սերնդով և տարիքով աւագ անդամին և երկրորդ ամէն բանի մէջ առաւելութիւնը տրւում է միշտ աւագին: Այսպէս, օրինակ, երբ գերդաստանի անդամները հաւաքւում են տանը, միշտ աւագութեան կարգով են նստում, օջախի մօտ՝ տան մեծը, սրա մօտ սրա կրտսերը և այլն, հաց ուտելիս ևս նոյն կարգով են նստում և նոյն կարգով է կերակուր բաշխւում: Նոյն խի քնելիս նոյն կարգն է պահպանւում, այնպէս որ, եթէ օր. միջնակ եղբոր քունը չի տանում, նրանից փոքրերը ստիպուած են անքնան արթնան մնալ՝ մինչև որ նա պաւկի: Երբ մինը ներս է մտնում, նրանից կրտսերներն ոտի են կանգնում և իրենցից բարձր նրան տեղ տալիս: Աւագի մօտ կրտսերը մեծ խոհանութիւն է համարւում լուսիւն պահպանել: Նոյն խի աւագի ներկայութեամբ իւր կնոջ հետ խօսել, իւր երեխային գրկել ու դուռը նոյնպէս անպարկեշտութիւն է համարւում:

Կող կթում, սար գնում, ուր պանիր է պատրաստւում, խնոցուց իւղը հանում:

Երկրորդ և երրորդ հարսներն ալիւր են մաղում, թոնիր վառում, գորգ, կապերտ գործում, կարում, կարկատում, հաց տանում արտը, կալը կալում, թեղում:

Փոքր հարսն առաւօտ շատ վաղ գնում ջուր է բերում, (բայց ոչ հարսնութեան առաջին կէս կամ ամբողջ տարին), սկեսրոջ և սկեսրայրի հանգերէները հագցնում, ձեռներին ջուր ածում, անկողինները հաւաքում, տունն աւելում, կրակ տնում, մինը դուրս գնալիս չուստերը առաջը դնում, դուռը բաց անում, կերակուր մատուցանում, սեղանը հաւաքում, բացի իւր ամուսնուց բոլորի տրեխները հանում, ոտները շփում, շաքաթը մի երկու անգամ ջուր տաքացնում, բոլոր տղամարդկանց ոտները լուսանում, անկողինները ձգում, սկեսրայրի, սկեսրոջ և մեծ տեգրի հանգերէները հանում, լամպը անցկացնում:

15—10 տարեկան աղջիկը ջուր է բերում, գորգ, կապերտ գործում, կալի ցորենը խախալում, աղուն է շինում, քաղհան տնում, կար անում:

10—6 տարեկան աղջիկը գուլպա է գործում, տունն աւելում, ամանները լուսանում, ջուր բերում, խի 6—3 տարեկանը կալ է քշում, գառներ և եղ արածացնում գիւղի մօտակայքում:

Միևնոյն աւագութեան կարգը պահպանում է և՛ կանանց մէջ: Ցան տիրուհուն փոխարինում է աւագ հարսը, սրբան էլ սրանից կրտսերը: Ամէն բանում — թէ ուռելիս, թէ խմելիս, թէ աշխատելիս, թէ նստելիս և թէ նոյն իսկ խօսելիս*) աւագութիւնը, պատիւը պատկանում է աւագին:

Աննատական կարգը կայանում է նրանում, որ արական սեռը միանգամայն գերակշռում է իգական սեռի վրայ թէ ընտանեկան ու հասարակական գիրքի մէջ և թէ ժառանգական խնդիրներում:

Իգական սեռը մանկութիւնից սկսած մինչև պառաւութիւնը կատարելապէս ստորադրուած է արական սեռին. գեռաղջիկ ժամանակ նա ստորադրում է հօրը և եղբայրներին. քոյրը իրաւունք չունի, նոյնիսկ իրենից կրտսեր եղբոր հարուածներին պատասխանել, արգար թէ մեղաւոր, նրա ծնողները միշտ եղբոր կողմն են և նա՛ կարող է միայն իւր լացով յուզել նրանց սիրտը, նրա բողոքը եղբոր դէմ համարեա երբէք ՚ի նկատի չի առնում, որովհետև ամի քօռ տղան օխտը ռաղ աղջկանից լաւ է: Ամուսնացած ժամանակ նա միանգա-

*) Կանանց մէջ յարգանքը արտայայտւում է շխտկանութեամբ — հարսնութեամբ և այս պատճառով առաջին հարսը 5, իսկ միւսները 8—10 տարի հարսնութիւն են անում սկեսորի հետ. իսկ սկեսրայրի հետ մինչև մահը: Միայն մի դէպքում, երբ սկեսուրը մեռած լինի, և սկեսրայրը հիւանդ, խնամքի կարօտ, առաջին հարսը, որ ստանձնած է լինում տան կառավարութիւնը, սկսում է խօսել սկեսրոջ հետ: Միւս հարսները իրենցից աւագների հետ 1—2 տարի հարսնութիւն են անում, և մինչև իրենցից անմիջապէս աւագի հետ չսկսեն խօսիլ, նրանից աւագի հետ չեն խօսիլ: Մեծ տեղերի հետ երբէք չեն խօսիլ, միջնակների հետ 5—10 տարի, իսկ փոքրերի հետ 2—3 տարի յետոյ: Պօտում են միայն շամուսնացած տալերի հետ, մինչդեռ ամուսնացածների հետ դարձեալ հարսնութիւն են անում: Միևնոյն լուծութիւնը պահպանում են նաև անծանօթ, փոքր ՚ի շատէ լաւ հագնուած օտարականին պատահելիս, մինչդեռ վատ հագնուած, աղքատ օտարականի հետ խօսում են. — մի ապացոյց ևս՝ որ շխտկանութիւնը յարգանքի, աննածութեան նշան է համարւում:

Սակայն փոխանակ լեզուով, նրանք միմիկայով են յայտնում

մայն ստորագրուած է իւր «զլխատէր» — ամուսնուն, իսկ այրի ժամանակ կամ տէղրներին և կամ իւր որդիներին»:

Հասարակական կեանքում ևս նրա դերը շափազանց սահմանափակուած է: Իրաւունք չունենալով ոչ մի տղամարդի հետ, կամ նրա ներկայութեամբ խօսելու, նա ոչ մի հասարակական գործի մէջ չի մասնակցում: Նոյն իսկ այն դէպքում, երբ մօտիկ աղջական տղամարդիկ չունենալով նա ստիպուած է իւր շահերը պաշտպանելու համար գիւղական դատարանին կամ հասարակական ժողովին դիմել, նրան հալածում է հասարակական կարծիքը, «անդգամ», «աներես» է կոչում, որ անյրան մարդկանց ներկայութեամբ կանգնում խօսում է:

Իրենց միտքը և եթէ այս էլ չի օգնում, այն ժամանակ նրանք տառում են փոքր երեխայի, որ նա ասէ իրենց ասածները և եթէ նա սաստիկ փոքր լինելով չի կարողանում, հարմանքն անջան բարձր են տառում երեխային, որ պարզ լսելի է լինում:

Այս չխօսկանութեան մասին հազարաւոր պատմութիւններ, աւանդութիւններ և անեկդոտներ կան, որոնցից յիշեմ մի-մի հատ. —

Հագուեցի Օսանց Պետրոսը հարսին ցորենի հորն է իջեցնում, որ սերմացու ցորեն հանէ: Երբ հանում պրծնում է, սա մոռանալով հարսի գոյութիւնը՝ թողնում է նրան հորի մէջ, ծածկում հորի կափարիչը և գնում դաշտ: Այստեղ, միջանի ժամից յետոյ միայն մտաբերում է հարսին և ապսպրում, որ հանեն նրան հորից: Խեղճ հարսը չհամարձակուելով խօսել սկեսրոջ հետ և կամ յետոյ բղբաւել՝ ստիպուած էր եղել միջանի ժամ մնալ անտանելի, մութ և խոնաւ հորի մէջ:

— Նոյ նահապետի ժամանակ, երբ սա տապանն էր շինել տալիս, մի պառաւ հարցրել է Նոյին, թէ ջրհեղեղը Երբ պիտի լինի:

— Երբ հարսը սկեսրոջ հետ խօսի, պատասխանել է Նոյը: Մի առ ժամանակից յետոյ մի օր այս պառաւը հարցնում է իւր հարսին.

«Թո՛նիրը կար չընկաւ (չվառուեց):

Ուր ա թա կար ընկաւ, էնքան փչել եմ, գլուխս տրաքւում ա, պատասխանում է հարսը:

Պառաւը սրա պատասխանից հասկանում է, որ ջրհեղեղի օրը հասել է, ապա թէ ոչ՝ հարսը իւր հետ չէր խօսի. մօտենում է թո՛նրին, տեսնում է ջուր է գուրս գալիս, վազում է Նոյի մօտ և

Նա զրկուած է նոյն իսկ ժառանգութեան իրաւունքից, երբ ունի եղբայրներ կամ եղբորորդիք, իսկ ամուսնու մահից յետոյ նա բացի իւր օժիտից, ոչինչ չի ստանում կեսրանց տնից՝ եթէ արու որդի չունի:

Նահապետական գերդաստանը այժմ արագութեամբ կազմալուծւում է և կազմում ընտանիքներ: Եղբայրները միմեանցից, երբեմն էլ որդիները ծնողներից բաժանւում են և առանձին ապրում:

Բաժանման ամենագլխաւոր պատճառները հետեւեալներն են.

ա. Պարագմունքների տարբերութիւնը, որ շատ անգամ յառաջ է գալիս վարկաւորների սակաւութիւնից: Գերդաստանի անդամներից մի քանիսը գաղթում են՝ քաղաքներում աշխատելու, ընդունում են այնտեղի գաղափարներն ու սովորութիւնները, իրենց վաստակն ամբողջովին տան մեծին չեն ուղարկում, շատ անգամ ցանկանում են իրենց կնոջը իրենց մօտ տանել, իրենց երեխային ուսման տալ, մինչդեռ գերդաստանը հակառակում է, որովհետեւ միւս երեխաներին ուսման չէ տրուած կամ բոլորին չի կարելի տալ և այլն:

Անդամներից մի քանիսն էլ արհեստներ են սովորում, և աւելի վաստակելով քան երկրագործ անդամները, ցանկանում են բաժանուել, իրենց ամբողջ վաստակը իրենց վայելելու:

բ. Գերդաստանի անդամների խորթութիւնը. համահայր կամ համամայր եղբայրները միմեանց հետ չեն կարողանում սիրով ապրել, որովհետեւ աչառութիւն են նկատում իրենց խորթ հօրից կամ մօրից, ուստի և բաժանւում են:

գ. Գերդաստանի անդամներից մինի կամ մի քանիսի վատ վարքը, ծուլութիւնը, խարդախութիւնը, կնոջ անբարո-

խնդրում, որ իրեն էլ վերցնի տապանի մէջ, սակայն սա մերժում է, ասելով թէ միայն մատաղահասներից պիտի վերցնի:

— Օձուն գիւղում մի գիւղացի հարցնում է մի ծանօթ հարսի թէ ի՞նչ է որոնում:

Սա ձեռները դնում է ալանջներին, կռանում և կամաց զըռում է:

յականութիւնը, որ ներքին խռովութիւնների պատճառ են դառնում:

դ. Նոր սերնդի հետ նոր գաղափարներ, նոր սովորութիւններ են թափանցում գերդաստանի մէջ: Փոքր ի շատէ կրթութեամբ նորահասը չի ցանկանում երկար տարիներ հարսնութիւն անել—չըսօսել, քոյն երեսին միշտ փակուած մընալ, ամուսնուց խորշիլ, իւր երեխային չը դպուել և նոյն իսկ մինչև կեսուրից հրաման չը ստանայ երեխային ծիծ չը տալ: Նրա այս նորասիրութիւններն սկեսուրի կողմից իրը լրբութիւն, անզգամութիւն են նկատուած և նախատուած: Նորահասը պատասխան է տալիս սկեսորոջը, որով և այն դարեւոր, սարկութեան մէջ պահող շղթան—լուս հնազանդութիւնը փշրուած է: Յառաջ են գալիս կոիւններ՝ բաժանուամ:

Բաժանուելիս համարեա բոլորովին ՚ի նկատի չի առնուած եղբայրների վաստակը: 20—25 տարի վաստակող քառասուն և հինգ ամեայ եղբայրը հաւասար բաժին է ստանում քսանամեայ եղբոր, կամ 10—20 տարի առաջ վախճանուած եղբոր միջանի տարեկան երեխայի հետ: Միմիայն ուտելիքէն, ցորենը, ալիւրը բաժանում են անդամների թուի համեմատ:

Բաժանումը կատարուած է երկու ժամանակ, ա. հօր կենդանութեան և բ. հօր մահից յետոյ:

Առաջին դէպքում, հօր կենդանութեան ժամանակ՝ որդիներից կամ մինն է բաժանում հօրից և կամ բոլորը:

Երբ միայն մինն է բաժանում, հայրը լիազօր է տալու նրան ինչ որ ինքը կամենայ, ըայց երբէք աւելի քան նրան կը հասնի: Նա կարող է բոլորովին զրկել նրան՝ «կինը տայ ձեռքը ճանապարհ ձգէ», ինչպէս արել են Ճնողում Մկրտումենց Առաքելին: Այսպիսի դէպքում համայնը կարող է միայն մի բանում միջամտել. նա կարող է պահանջել, որ հայրը յանձնէ այդ բաժանուող որդուն այն հոգաբաժինը, որ նա ստացել է այդ որդու պատճառով համայնական հողերից:

Հօր մահից յետոյ այս զրկուած եղբայրը նոյն իսկ այդ համայնքի միջամտութեամբ հաւասար բաժին է պահանջում իւր եղբայրներից և ստանում է: Իսկ եթէ հայրը նրան հաստ-

նեղի բաժինն արդէն տուած է լինում, նա այլևս ոչ մի իրաւունք չի ունենում հայրական գոյքի վրայ, այդ բոլորը բաժանուած է անբաժան եղբայրների մէջ:

Եթէ հօր կենդանութեան ժամանակ բոլոր եղբայրներն են կամենում բաժանուիլ, այս դէպքում հայրը այլևս անգործ է գտնուում նրանց գրկելու: Այսպիսի դէպքեր տեղի են ունենում գլխաւորապէս այնպիսի ժամանակ, երբ հայրն արդէն ծերացած և տան կառավարութիւնից յետ քաշուած է լինում:

Այս դէպքում եղբայրներն են հօրը բաժին տալիս. ներսնը յաճախ մի այգի, մի արտ են յատկացնում նրան, որպէսզի նրա արդիւնքով ապրի, իսկ նրա մահից յետոյ կրկին բաժանուի եղբայրների մէջ: Երբեմն էլ մի զումար են տալիս նրան, որ մի մասը ծախսէ, միւսն էլ թողնի թաղման և հոգեհացի ծախսերը հոգալու համար *):

Այս զումարը, որ 300—500 բուրլի է լինում, կոչուած է հոգեբաժին: Երբեմն էլ, եթէ նա դեռ ևս բաւականին առողջ է, եղբօր հաւատարման են տալիս: Հայրն ընտրուած է որդիներից մինին, սովորաբար փոքրին և նրա մօտ ապրում, թողնելով իւր ունեցածը նրան: Իսկ եթէ առանձին է ապրում, մահից յետոյ եղբայրները կրկին հաւաքուած են թէ թաղման ծախսերը միասին հոգալու, և թէ նրա ունեցածն իրենց մէջ բաժանելու:

Եթէ եղբայրները հօր մահից յետոյ են բաժանուում, նախ քանզհանուր գումարից տալիս են շամուսնացած եղբայրներին այնքան, որքան ծախսել են միւսների հարսանիքին, (ազափանա) ապա մի կով, մի քանի ոչխար յատկացնում են այն եղբօրը, որի մօտ կամենում են ապրել իրենց մայրը մինչև մահ, կամ քոյրերը՝ մինչև ամուսնութիւնը: Ապա մի ձի կամ մի եզ, մի կամ մի քանի ոչխար ու զէնքեր նուէր են տալիս մեծ եղբօրը, ի պատիւ աւագութեան, (մենծահաբիկ) և յետոյ ամբողջ շարժական և անշարժ կալքը եղբայրների

*) Օրինակ Շնորուած Ասատուր Տէր Մելիքսեղեկեանին տուել են 300 բուրլի:

[Ժուրի համեմատ բաժիններ անում, ու «ծեղ» ձգում—(վիճակ հանում) *): Սովորաբար ցորենը, ալիւրը և միւս ուտելիղէնները ոչ [թէ եղբայրների՝ այլ բոլոր անդամների թուրի համեմատ են բաժանում:

Սովորաբար հայրական տունը [թողնում են աւագ եղբորը. երբեմն էլ, եթէ մայրը կամենում է ամենափոքրի հետ ապրել՝ սրան:

Ջրադացն ու ձիթահանքը չեն բաժանում, այլ պահում են իբրեւ ընդհանուր սեպականութիւն, հերթով կառավարում են և արդիւնքը հաւասար բաժանում:

Սովորաբար մօր բերած օժիտը տալիս են շամուռնացած աղջկան, իսկ եթէ բոլորն արդէն ամուսնացած են, միւս իրերի հետ այս եւս բաժանում է եղբայրների մէջ:

Համահայր որդիները հաւասար մասեր ստանալով հայրական կարողութիւնից, իւրաքանչիւրը ժառանգում է իւր հարազատ մօր օժիտը:

Պէտք է ասել, որ ժողովուրդը բաժանումը մեղք է համարում, որովհետեւ «բանդում են հայրական սուրբ օջախը»: Ուստի և երբ բաժանումից յետոյ մինի որդին կամ կենդանին մեռնում է, ասում են. «բաժանքը նրա վրայ ընկաւ»:

Բաժանուելու ժամանակ շատ մեծ անբաւականութիւններ են ծագում. ամէն մինը աշխատում է լաւը, մեծն ստանալ. եղել են դէպքեր, որ նոյն իսկ հաւերը կշռել և այնպէս են բաժանել**): Այս անբաւականութիւններին վերջ դնելու համար ընտրում են բաժանարարներ, որոնց որոշումներին խոստանում են հպատակուել:

*) «Ծեղ»ը այսպէս են ձգում.—ամէն մինը մի ձեռք՝ յարդի, փայտի, քարի կտոր՝ տալիս են մի երեխայի կամ մի անպիտակ մարդու, և խնդրում, որ այդ ձեղերը ձգէ բաժինների վրայ: Ում ձեղն որ ինչ բաժնի վրայ ընկնի, այն նրան է բաժին ընկնում:

**) Այստեղից է յառաջացել Շնողեցի «Հաւ կշռողեց» մականունը: